

Գ. Ռ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայ բարբառագիտության ներածություն, ՀՍՍՀ ԳԱ
հրատարակչություն, Երևան, 1972, 347 էջ

Հայ բարբառագիտության որպես ինքնուրույն գիտաճյուղի գոյության մոտ մեկ հարյուրամյակի ընթացքում բավական մեծ աշխատանք է կատարվել բարբառագիտական նյութի հավաքման, հայոց լեզվի առանձին տերիտորիալ միավորների մենագրական նկարագրության ուղղությամբ, կատարվել են հայ բարբառների դասակարգման փորձեր, որոնք ժամանակին կարևոր նշանակություն են ունեցել և զգալիորեն խթանել են բարբառների հետազոտումնախորությունը։ Սակայն որոշ ժամանակից ի վեր ստեղծվել էր այնպիսի մի վիճակ, երբ հետադոտողները սահմանափակվում էին առանձին բարբառների ուսումնասիրությամբ՝ ընդունված ավանգական եղանակներով, իսկ վերջին երկու տասնամյակում տեսական կարևոր հարցեր շուրջափող ընդհանուր բնույթի աշխատություններ երևան չէին գալիս։ Այդ վիճակը պետք է բացատրել ինչպես հայերենի բարբառային իրադրության արտակարգ բարդ բնույթով, այնպես էլ հետազոտության առկա մեթոդների թերություններով և տարբեր մեթոդների անբավարար կիրառությամբ։ Բավական է նշել, որ լեզվաբանական աշխարհագրության հետազոտական մեթոդները հայ բարբառագիտության մեջ որևէ սխտեմատիկ կիրառություն չեն գտել։

Այս առումով Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը ծրագրային նշանակություն ունի թե՛ քննարկվու, արցների շրջանակի, թե՛ հետազոտության միանգամայն նոր մեթոդիկայի առումով։ Հեղինակի քննության առարկան են դարձել բարբառագիտական այնպիսի հարցեր, ինչպիսիք են բարբառների դասակարգման, գրական լեզուների ու բարբառների փոխհարաբերության, նրանց «մաքրության» աստիճանի, ժամանակագրական տարբեր կտրվածքներում բարբառային իրադրության բնորոշման, բարբառների բաժանման ժամանակագրության, բարբառային հնադրյալ տարբերությունների, արդի բարբառների հնարանությունների հարցերը և այլն։ Նշված խնդիրների լուսաբանման համար հեղինակը կիրառում է տարբեր մեթոդներ (պատմա-համեմատական, լեզվաժամանակագրական, վիճակագրական), միևնույն հետ համադրելով դրանց արդյունքները։ Ընդ որում, եթե մինչև այժմ Գ. Զահուկյանը հայտնի էր որպես հեղինակավոր համեմատաբան (կոմպարատիվիստ), ապա այժմ նա հանդես է գալիս իբրև բարբառագիտական մի նոր դիսցիպլինի՝ վիճակագրական բարբառագիտության և համապատասխան մեթոդի ստեղծող։

Գրախոսվող աշխատության առաջին մասը հիմնականում նվիրված է ժամանակակից հայ բարբառների դասակարգմանը։ Նախքան բուն խնդրին անցնելը, արդեն իր աշխատությունների համար ավա՜ղույթ դարձած սովորությամբ, հեղինակը հայագիտության նշված բնագավառի զարգացման համառոտ, բայց սպառիչ ակնարկով բացահայտում է այն բոլոր նշանակալից փուլերը, որոնցով անցել է հայ բարբառագիտությունը մինչև մեր օրերը։ Այդ կապակցությամբ նա նշում է բարբառագիտության մեջ տեղ գտած հիմնական թերությունները՝ բարբառների քննության անբավարար պատմականություն կամ համաժամանակյա և տարաժամանակյա սկզբունքների շփոթում, եղած դասակարգումների միակողմանիություն, միահատկանիչ դասակարգումից բխող բարբառների բարդ և բազմակողմանի փոխհարաբերության անտեսում, բարբառային միավորների և ենթամիավորների ստորակարգային հարաբերությունների բացահայտման օբյեկտիվ չափանիշների բացակայություն։

Այս թերությունների հաղթահարման ուղիների որոնումներն են, որ հեղինակին հանգեցնում են վիճակագրական բարբառագիտության ստեղծմանը, որի հիմնական նպատակն է թարբառների փոխհարաբերությունների որոշումը և բարբառային միավորների դասակարգումը» (էջ 14)։

Վիճակագրական բարբառագիտության մեջ կիրառվող բարբառների դասակարգումը նախորդների համեմատ ունի երկու սկզբունքային տարբերություն։ Առաջինը և առավել կարևորն այն է, որ դասակարգման հիմք է ընդունվում ոչ թե լեզվական կառուցվածքի մեկ հատկանիշ,

այլ հատկանիշների մի որոշակի ամբողջություն: Բարբառների բազմահատկանիշ դասակարգման գաղափարը հենվում է լեզվաբանական աշխարհագրության այն հիմնական դրույթի վրա, որի համաձայն բարբառների միջև չկան կտրուկ, հստակորեն գծագրվող տերիտորիալ սահմաններ, այլ ղուգարանությունների (իզոգլոսների) ցանցի խտությամբ որոշվող բարբառային կենտրոնների միջև գոյություն ունեն աստիճանական անցումների գոտիներ: Այդ նշանակում է, որ բարբառների լեզվական առանձնահատկությունների բնական տարածական տարբերությունների և փոխներթափանցման հետևանքով ստեղծվում է ընդհանուր գծերի ու տարբերությունների բարձր պատկեր, և բարբառների իրական փոխհարաբերությունը ճշարտացիորեն կարելի է ներկայացնել միայն մի խումբ առավել էական տարբերակիչ հատկանիշների հաշվառումով:

Սրկվորդ սկզբունքային նորությունը (բխում է առաջինից) այն է, որ դասակարգման մեծ օբյեկտիվությունն ու ճշգրտությունը ապահովվում են քանակական որոշակի ցուցիչների կիրառմամբ և լեզվական նյութի վիճակագրական մշակմամբ:

Վիճակագրական բարբառագիտության նյութի սկզբունքներով հետազոտությունն անցնում է մի շարք փուլերով, որոնք նախորդում են վերջնական նպատակի իրագործմանը՝ հայերենի բարբառների դասակարգմանը: Աշխատանքի նախնական փուլն է բարբառախոս վայրերի և բարբառային հատկանիշների ընտրությունը: Այնուհետև կազմվում են աղյուսակներ, որոնցում էատարվում է ընտրված բարբառային հատկանիշների տեղայնացում և բաշխում ըստ բարբառախոս վայրերի: Հաջորդ փուլի ժամանակ մշակվում են աղյուսակների տվյալները, այսինքն՝ որոշվում ընտրված բարբառային միավորների (վայրերի) յուրաքանչյուր զբաղի միջև եղած տարբերությունների և ընդհանրությունների չափը՝ համապատասխան թվային ցուցիչներով արտահայտված, որոնց հիման վրա կազմվում են նոր աղյուսակներ: Վերջին փուլը իրենից ներկայացնում է այդ ցուցիչների մեկնաբանությունը, որը և հանգեցնում է բարբառների բազմահատկանիշ դասակարգմանը: Այս տեսակետից կարևոր է նշել վիճակագրական բարբառագիտության և մի ընդհանրություն լեզվաբանական աշխարհագրության հետ, որտեղ նույնպես դասակարգումը սկսվում է լեզվական նյութի տեղայնացումից (այս դեպքում՝ քարտեզագրումից) հետո, քարտեզագրման արդյունքների մեկնաբանության միջոցով: Սա հնարավորություն է տալիս այս երկու դիսցիպլինաներին խուսափելու նախապես ընդունված սխեմաներից, այս կամ այն բարբառային միավորի մասին կանխակալ պատկերացումներից:

Սակայն դա չի նշանակում, թե տվյալ աշխատության մեջ ուսումնասիրությունը կատարվում է հայ բարբառագիտության անցած ուղուց և նրա արդի վիճակից միանգամայն անկախ: Մասնավորապես, բարբառախոս վայրերի ընտրությունը մեծ չափով պայմանավորված է ինչպես բարբառային միավորների փոխհարաբերության մասին ձեռք բերված որոշ նախնական գիտելիքներով, այնպես էլ այդ միավորներից յուրաքանչյուրի ուսումնասիրվածության ներկա աստիճանով: Տեղ է տրված նաև գիտական ավանդույթին. այսպես, ընտրված 120 բարբառախոս վայրերն ընդգրկում են գրեթե այն բոլոր միավորները, որոնք նախորդ ուսումնասիրողների կողմից ընտրվել են որպես բարբառ կամ ենթաբարբառ և ավելի քիչ տեղ է տրվում նախկինում որպես խոսվածք ընդունված միավորներին:

Նշված 120 բարբառախոս վայրերից յուրաքանչյուրը բնութագրվում է ըստ նախապես ընտրված 100 հատկանիշների, որոնք և վերցվում են որպես հայերենի բարբառների դասակարգման հիմք: Ավելորդ է նշել, թե յուրաքանչյուր դասակարգման համար ինչպիսի՞ առաջնահերթ կարևորություն ունի դասակարգման հիմք հանդիսացող հատկանիշների ճիշտ ընտրությունը: Այս տեսակետից կարող ենք ասել, որ տվյալ դեպքում միավորները ընտրված են օբյեկտիվ չափանիշների հիման վրա. նրանք պետք է բավարարեն տարածվածության և կարևորության պահանջները: Առաջին չափանիշի համաձայն ընտրվում է այնպիսի հատկանիշ, որն ընդգրկում է բարբառախոս վայրերի 50±35%-ը: Կարևորության չափանիշի համաձայն վերցվում են այնպիսի միավորներ, որոնք ոչ միայն օժտված են համակարգի մեջ ֆունկցիոնալ մեծ ծանրաբեռնվածությամբ և գործածման հաճախականությամբ, այլև հանդես են բերում շեղումներ տվյալ համակարգից մեկ այլ համակարգ, այսինքն՝ այդ միավորները պատկանում են հայոց լեզվի թե՛ տերիտորիալ, թե՛ պատմական տարբերակները համակարգային տեսակետից սահմանազատող ամենահատկանշական իրավությունների թվին:

Նշված 100 հատկանիշները խմբավորված են այնպիսի սկզբունքով, որ ըստ հնարավորին համամասնորեն արտահայտեն լեզվական համակարգի տարբեր կողմերը: Հատկանիշներից 50-ը հնչյունական են (25 բաղաձայնական և 25 ձայնավորային), 50-ը քերականական, հիմնականում ձևաբանական (25 անվանական և 25 բայական):

Հատկանշի առկայությունը տվյալ բարբառախոս վայրում նշանակվում է $\pm$ նշանով, իսկ բացակայությունը՝ — նշանով:

Թեև հաշվարկումների հարմարության համար ընդունված է հատկանիշների թվի նախապես որոշված սահման (100 հատկանիշ), բայց բարբառախոս միավորների բնութագրումը փաստորեն ավելի հարուստ է: Դրանց լեզվական առանձնահատկությունների մասին առավել լրիվ պատկերացում տալու նպատակով հատկանիշների նշված խմբերից յուրաքանչյուրի վերջին կետի մեջ (25-րդ, 50-րդ, 75-րդ և 100-րդ), ինչպես նաև մի շարք այլ կետերի մեջ (ընդհանուր առմամբ 37 կետում) ամփոփված են մեկից ավելի հատկանիշներ, որոնք աղյուսակներում ներկայացվում են $+1$, $+2$, $+3$ և այլն նշաններով ու հաշվվում են որպես կես միավոր: Պետք է սակայն նշել, որ կես միավոր հաշվվող բոլոր հատկանիշները համարված չեն, քանի որ վերջին կետերում խմբավորված հատկանիշներն իրենց բնույթով տարբերվում են այլ կետերում միավորվածներին: Եթե վերջիններս ներկայացնում են նույն հատկանշի ներքին՝ ավելի մանր տարբերակումները կամ արտացոլում են հատկանշի ընդգրկման ոլորտի առանձնահատկությունները (63, 72, 77), ապա հատկանիշների հնչյունա-քերականական խմբերի վերջին կետերում (25, 50, 75, 100) ամփոփված են միմյանցից միանգամայն տարբեր հատկանիշներ: Բացի այդ, կես միավոր են հաշվվում նաև $\pm$ և $\pm$ նշանակումները, որոնք արտացոլում են բոլոր դեպքերի ոչ լիակատար ընդգրկումը հատկանշի կողմից կամ տվյալ իրավության սկզբնավորվող կամ մահացող երևույթ լինելը: Ըստ երևույթին, նշված 37 կետերի $+1$, $+2$... նշանակումները 0,5 պետք էր հաշվել միայն բարբառախոս միավորների զույգի միջև եղած տարբերությունների հաշվառման (կոդելացիոն հաշվումների) ժամանակ, ըստ ընդհանուր սկզբունքների, իսկ բարբառախոս հատկանիշների ընդհանուր քանակի մեջ պետք է համարվեին 1, քանի որ ինքնուրույն հատկանիշների արժեք ունենալու վերաբերում է 25-րդ, 50-րդ, 75-րդ և 100-րդ կետերի նույնատիպ նշանակումներին, ապա գրանցից յուրաքանչյուրը մեկ միավոր պետք է հաշվել բոլոր դեպքերում: Սակայն այստեղ էլ կատարվի, որ բարբառախոս միավորները բնութագրվում են հատկանիշների ոչ հավասարաչափ քանակով (ներանցից մի քանիսը ստանում են 100-ից ավելի հատկանիշներ), քանի որ մեկ վանդակում կարող են մեկից ավելի $+$ -ներ լինել ($+1, 2, 3$...): Այսպիսով, որոշ հակասականություն կա, որը անհարմարություններ է ստեղծում հաշվումների համար: Սակայն քանի որ նշված դեպքերը տոկոսային հարստություններ հաշվումների մեջ մեծ տեղ չեն գրավում և չեն անցնում թույլատրելի հարաբերական սխալի սահմաններից, ապա պետք է ենթադրել, որ դրանք չեն կարող խաթարել բարբառախոս միավորների իրական փոխհարաբերության պատկերը, և դրանք քննության ենթադրում միայն հաշվառման սկզբունքների առավել ճշգրտման տեսակետից:

Անցնելով բարբառների բուն դասակարգմանը ըստ բարբառախոս վայրերի միմյանցից ունեցած տարբերությունների քանակի, հեղինակը նպատակահարմար է գտնում ընդունել բարբառախոս միավորների երեք մակարդակ՝ բարբառախոսումբ, բարբառ և խոսվածք, թեև նշում է, որ ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել վեց մակարդակ, նշվածներին ավելացնելով նաև ենթախոսումբ, ենթաբարբառ և ենթախոսվածք միավորները: Ըստ Գ. Զահուկյանի դասակարգման՝ մեկ խոսվածքի մեջ խմբավորվում են 0,5-ից մինչև 22 հատկանշի տարբերություն ունեցող միավորները, մեկ բարբառի մեջ՝ 22,5-ից մինչև 44, իսկ մեկ բարբառախոսումբի մեջ՝ 44,5 և ավելի (բարբառախոս վայրերի մեկ զույգի միջև եղած տարբերությունների առավելագույն քանակը 66,5 է): Այնուհետև առանձնացվում են բարբառախոս միավորների կենտրոնները, ընդ որում, հեղինակը տարբերակում է հիմնական և միջակա կենտրոններ: Հիմնական կենտրոնները որոշվում են ըստ յուրաքանչյուր մակարդակի համար սահմանված տարբերությունների քանակի, իսկ միջակա կենտրոններ են համարվում այն վայրերը, որոնք տարբերվում են երկու կամ ավելի հիմնական կենտրոններից հատկանիշների հավասար քանակով: Ըստ այսմ, վերցված 120 բարբառախոս վայրերը, որոնք հավասարեցվում են խոսվածքային միավորներին (քանի որ ներանցից յուրաքանչյուրը մյուսներից ունի 0,5-ից ավելի տարբերության ցուցիչ), ընդգրկվում են 44 բարբառների մեջ, որոնցից 38-ը հիմնական բարբառախոս միավորներ են, իսկ 6-ը միջբարբառներ: Առանձնացված բարբառներն իրենց հերթին խմբավորվում են 11 բարբառախոսումբի մեջ, որոնցից վեցը հիմնական խմբեր են, իսկ հինգը՝ միջնախմբեր: Բարբառախոսներն անվանվում են ըստ նրանց կենտրոնների աշխարհագրական տեղաբաշխման, այսպիսով ստացվում են բարբառների հետևյալ խմբերը: I Անտիոքի կամ ծայր հարավ-արևմտյան խումբ (2 բարբառախոս միավորով), II (I—III) Կիլիկիայի կամ հարավ-արևմտյան միջնախումբ (2 բարբառ), III Փոքր

Ասիայի կամ արևմտյան խումբ (16 բարբառ), IV (I—III—VI) Համշենի կամ Հյուսիս-արևմտյան միջնախումբ (2 բարբառ), V (III—VI) Առդեալի (Տրանսիլվանիայի) կամ Ժայր Հյուսիս-արևմտյան միջնախումբ (1 բարբառ), VI Մուշ-Տիգրանակերտի կամ Հարավ-կենտրոնական խումբ (4 բարբառ), VII (VI—VIII) Վանի կամ Հարավային միջնախումբ (2 բարբառ), VIII Խոյ-Մարաղայի կամ Հարավ-արևելյան խումբ (1 բարբառ), IX Արարատյան կամ Հյուսիս-արևելյան խումբ (5 բարբառ), X (IX—XI) Ղարաբաղ-Շամախիի կամ Ժայր Հյուսիս-արևելյան միջնախումբ (7 բարբառ), XI Ագուլիս-Մեղրիի կամ արևելյան խումբ (2 բարբառ)։ Հայ բարբառները բացի նշված բարբառախմբերի մեջ միավորելուց, հեղինակը դրանք պայմանականորեն բաշխում է նաև երկու մեծ խմբակցությունների՝ արևմտյանի և արևելյանի, առաջինին հատկացնելով 1—72-րդ, իսկ երկրորդին՝ 73—120-րդ վայրերը։ Այդ բաշխումը նա համարում է պայմանական, բանի որ այս դեպքում մանրամասնությունները հաշվի չեն առնվում, և միջխմբակցություններ չեն առանձնացվում։ Բացի այդ, հեղինակը նշում է, որ արևելյան և արևմտյան խմբակցություններն ավելի հստակ են սահմանազատվում, երբ հաշվի են առնվում միայն ձևաբանական հատկանիշները (էջ 129)։

Տարածամանակյա բարբառագիտության հարցերի մեջ, որոնց նվիրված է աշխատության երկրորդ մասը, առավել կարևոր է V դ. լեզվական իրադրության պրոբլեմը, և այդ տեսակետից ուշադրության արժանի է տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցած բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման հիմքերը։ Եղած լեզվական նյութի սահմաններում, երբ հնարավոր չէ ներկայացնել V դ. որևէ բարբառ իր առանձնակի գծերով, քերականական կառուցվածքի որոշակի պատկերով՝ ի հակադրություն դրաբարյան (գրական մշակման ենթարկված) համակարգի, ըստ երևույթին, առայժմ V դ. բարբառների դասակարգման միակ արդյունավետ մեթոդը կարող է լինել Գ. Զահուկյանի առաջարկած՝ առանձին վերցրած հատկանիշների տեղանքումը ըստ բարբառախոս վայրերի։ Այստեղ ժամանակակից բարբառների դասակարգման համեմատությամբ ծագում են մի շարք նոր դժվարություններ, որ բխում են պատմական պայմանների առանձնահատկություններից՝ բարբառախոս վայրերի բնակչության բուռն տեղաշարժեր, 1500 տարվա ժամանակագրական խզում և այլն, որի պատճառով V դ. բարբառների փոխհարաբերության պատկերը կարող է լիակատար հավաստիությամբ օժտված չլինել։

V դ. բարբառների դասակարգման համար հեղինակը թողնում է միայն 40 հատկանիշ (առանց հնչյունական և ձևաբանական միավորների համամասնության պահպանման)՝ 100 հատկանիշ պարունակող ցուցակից բացառելով բացահայտ նորագոյացումները և մի շարք մասնակի փոփոխություններ ու ճշգրտումներ մտցնելով ձևակերպումների մեջ։ Այս 40 հատկանիշների տեղանքումը կատարվում է ըստ ժամանակակից վիճակի համար ընտրված 120 բարբառախոս վայրերի։ Այս կապակցությամբ պետք է ասել, որ նշված հատկանիշների այդպիսի տեղանքումը արտացոլում է ոչ այնքան V դ. բարբառային հատկանիշների իրական տեղաբաշխումը, որքան V դ. բնորոշ հատկանիշների պահպանված կամ ներկայացված լինելը ժամանակակից բարբառախոս վայրերում, մանավանդ, եթե հիշենք, որ շատ բնակավայրեր, այդ թվում գաղթավայրեր V դ. դեռևս չկային, իսկ որոշ վայրերում հայ բնակչություն չկար։ Թերևս ավելի նպատակահարմար կլիներ V դ. բարբառային վիճակի բնութագրման համար կազմել ևս մեկ աղյուսակ, որտեղ կթողնվեին ոչ թե բոլոր 120 վայրերը, այլ (ինչպես այդ արվեց հատկանիշների ընտրության ժամանակ՝ 100-ից թողնվեց 40-ը) կընտրվեին միայն այն վայրերը, որտեղ V դ. հայ բնակչության առկայությունը անկասկած է։ Այս դեպքում դասակարգումը ավելի կմոտենար իրական վիճակին, բարբառների դասակարգման աղյուսակում տեղ չէին գտնի այնպիսի վայրեր, որոնց գոյությունը V դ. հավաստի չէ (դրանք աղյուսակում նշված են աստղանիշներով), և կարելի կլիներ խուսափել աղյուսակում ավելցուկային միավորների ընդունելուց, երբ, ասենք, որևէ բարբառ իր բոլոր խոսվածքներով աստղանիշներով է բերվում (օր.՝ Խաղտիքահայ ենթաբարբառը իր Զանիկի, Զեֆանոսի և Մալայի խոսվածքներով կամ Ակնի միջենթաբարբառը, կամ նույնիսկ Առդեալի (Տրանսիլվանիայի) ենթաբարբառը)։

Ինչ վերաբերում է բարբառային հատկանիշների բաշխմանը ըստ ժամանակակից բարբառախոս վայրերի, ապա այդ, ինչպես ճիշտ կերպով նշում է գրախոսվող աշխատության հեղինակը, մեծ նշանակություն կարող է ունենալ և ունի ինչպես բնակչության պատմական տեղաշարժերը որոշելու, այնպես էլ V դ. լեզվական իրադրությունների, այս դեպքում՝ բարբառային տարբերությունների զարգացման ուղիները և տարածման շրջանակները պարզելու տեսակետից։ Ինչևէ, V դ. բարբառների դասակարգման փորձը Գ. Զահուկյանի կարևոր ներդրումն է հայերեն

նի պատմական բարբառագիտության մեջ և կարող է հիմք հանդիսանալ հետագա խոր ուսումնասիրությունների համար, մանավանդ որ հեղինակը, բացի դասակարգման համար ընտրված 40 հատկանիշներից, ի մի է բերում նաև V դ. հնարավոր բարբառային հատկանիշները (զուգարանությունները), հենվելով մինչև օրս հավաքված ամբողջ փաստական նյութի վրա: Այստեղ, բացի աղյուսակում նշված հատկանիշներից, ընդգրկվում են նաև V դ. գրաբար մատենագրության մեջ հանդիպող զուգաձևությունները, որոնց հիմնական մասը կարող է բարբառային հատկանիշի արժեք ունենալ: Հեղինակը նշում է 130 բարբառային հատկանիշ, վերտպահություն անելով, որ դրանց կազմը հետագայում կարող է ճշգրտվել և լրացվել նոր տվյալներով: Անշուշտ, V դ. համար առանձնացվող հատկանիշների վերաբերյալ կարող են որոշ հարցեր ծագել, օրինակ՝ ինչպիսի՞ արժեք է վերագրվում այն հատկանիշներին, որոնց համար V դ. վկայված օրինակներ չկան (այդպիսիք կան նաև 40 հատկանիշ պարունակող ցուցակում):

Պետք է ասել, որ շատ կարևոր են V դ. բարբառային հատկանիշների համալրման ու ճշգրտման համար համապատասխան նյութի աղբյուրները, որ նշում է Գ. Զահուկյանը (էջ 161)՝ հին հեղինակների հաղորդումները հայոց լեզվի տարածման տարբեր շրջանների լեզվական առանձնահատկությունների մասին, մատենագրության մեջ գրական նորմայից կատարված շեղումներն ու զուգաձևությունները, օտար աղբյուրներում հայերեն բառերի տառադարձումները և այլն: Նշված աղբյուրների քննությունը կարող է մի շարք մենագրական ուսումնասիրությունների հիմք հանդիսանալ:

Բարբառների դասակարգումից բացի, վիճակագրական բարբառագիտության մեջ կիրառվող քանակական մեթոդները հնարավորություն են տալիս հեղինակին լուսաբանելու նաև մեկ այլ կարևոր պրոբլեմ՝ հայոց լեզվի զարգացման տարբեր շրջաններում բարբառների և գրական լեզուների փոխհարաբերության հարցը, պարզելու մեր շոքս գրական լեզուների (գրաբար, միջին գրական հայերեն, արևմտահայերեն և արևելահայերեն) մերձավորության աստիճանը: Ճշգրիտ քանակական ցուցիչների միջոցով հեղինակը հաստատում է այն փաստը, որ արդի գրական լեզուները գրաբարից տարբերվում են գրեթե նույնքան հատկանիշներով, որքան և միջին գրական հայերենը, բայց արևելահայ գրական լեզուն հնչյունական հատկանիշներով ավելի մոտ է գրաբարին, քան միջին հայերենը և արևմտահայ գրական լեզուն, իսկ քերականական հատկանիշներով ավելի հեռու է, քան վերջիններս: Արևմտահայերենը կրկնակի մոտ է միջին գրական հայերենին, քան արևելահայերենը և փաստորեն հանդես է գալիս որպես միջին հայերենի ժառանգ (էջ 198—200):

Քննելով V դ. բարբառների, գրաբարի ու միջին գրական հայերենի, ինչպես նաև ժամանակակից բարբառների ու գրական լեզուների միջև եղած փոխհարաբերությունները, հեղինակը հետաքրքրական դիտողություններ է անում գրական լեզուների բարբառային հիմքի հարցի վերաբերյալ, գտնելով, որ մեր գրական լեզուներից և ոչ մեկը չի նույնանում որևէ բարբառի կամ խոսվածքի հետ, ընդ որում, նշում է, որ եթե գրաբարը և ժամանակակից գրական լեզուները զգալիորեն հեռացել են իրենց խոսակցական հիմքից, ենթարկվելով նաև այլ բարբառների (իսկ ժամանակակից գրական լեզուները նաև գրաբարի) ազդեցության, ապա միջին գրական հայերենը ավելի մեծ ընդհանրություններ է դրսևորում ժամանակի խոսակցական և բարբառային տարբերակների հետ, որի պատճառը գրական մշակման պրոցեսի միասնականության և ինտենսիվության բացակայությունն էր:

Մենք փորձեցինք անդրադառնալ Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ քննված բարբառագիտական բազմաթիվ պրոբլեմներից միայն մի քանիսին, նպատակ ունենալով հիմնականում ներկայացնել վիճակագրական բարբառագիտության բերած նորությունները, թեև աշխատության մեջ, ինչպես նշվեց, շոշափվել են նաև ուրիշ հարցեր և կիրառվել են նաև այլ մեթոդներ: Մասնավորապես պատմա-համեմատական մեթոդի կիրառմամբ հեղինակը հայտնաբերում և համապատասխան բաժիններում ներկայացնում է բարբառային հնագույն տարբերությունների հետքերը գրաբարում, բացահայտում է ժամանակակից բարբառների հնչյունա-քերականական, ինչպես նաև բառային հնաբանությունները (արխաիզմները), կարևոր նյութ տրամադրելով հնդեվրոպաբանությանը և արեալային լեզվաբանությանը, որ նույնպես պետք է համարել աշխատության արժանիքներից մեկը:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Մ. Սվոդեշի բառավիճակագրական լեզվաժամանակագրության մեթոդի ավելի ընդլայնված կիրառումը հայ բարբառների նկատմամբ. մանավանդ որ դրա տվյալները հաստատում են բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման արդյունքները ոչ միայն բարբառների, այլև գրական լեզուների և բարբառների միջև եղած

փոխհարաբերությունների վերաբերյալ: Ինչ վերաբերում է լեզվական փաստերի, տվյալ դեպքում՝ բարբառների բաժանման (դիվերգենցիայի) ժամանակագրությունը պարզելուն, ապա Մ. Սվոդեշի մեթոդը դեռևս ցանկալի արդյունքներ չի տալիս. հեղինակը նշում է, որ դրա արդյունքները հակասության մեջ են մտնում վիճակագրական դասակարգմամբ պարզված փաստերի հետ: Այդ բխում է, անշուշտ, մեթոդի ընդհանուր թերություններից, որոնց մասին բազմիցս խոսվել է լեզվաբանական դրականության մեջ (հիշենք Մ. Սվոդեշի քննադատներին):

Դրախոսվող աշխատության արժեքն ավելի է մեծանում, երբ նկատի ենք առնում այն բոլոր տեսական և դործնական դժվարությունները, որոնք կանգնած են հեղինակին հետազոտողի առաջ՝ նախկինում հավաքված հսկայական ծավալի բարբառագիտական նյութի քննադատական օգտագործում, ինֆորմանտների միջոցով նոր տվյալների որոնում, բազմաթիվ աղյուսակների ու գծագրերի կազմում, որոնց միայն մի մասն է մտել գրքի մեջ, մաթեմատիկական ապարատի կիրառման օպտիմալ եղանակների և այլ տեսական սկզբունքների մշակում և այլն:

Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածությունը» նշանակալից երևույթ է ոչ միայն հայագիտական, այլև ընդհանուր լեզվաբանական առումով, իրենից ներկայացնելով հեղինակի ստեղծած նոր դիսցիպլինի՝ վիճակագրական բարբառագիտության հիմնական սկզբունքների շարադրանքը և համապատասխան մեթոդիկայի առաջին հաջող կիրառման արդյունքների ամփոփումը:

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Քանադիական գիտությունների քննաժողով